10 մարտի 2011 թվականի N 229 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

-----------------------------------------------------------------------------------------------------

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրա-պետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փո-փոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները`

1) որոշման N 1 հավելվածը «0200 Սոցիալական ապահովություն» տողից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր բաժնով.

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 0100 Հանրային ծառայություն | | | | | | |
| 0101 | Ոստիկանական գործ | Ոստիկան | - | 6 ամիս | - | - |

».

2) որոշման N 1 հավելվածի «2500 Քիմիական արտադրություն» բաժինը

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2511 | Ավտոդողերի արտադրություն, վերականգնում և նորոգում | Անվադողեր հավաքող | 3 | 1 | 1 | 3 |

»

տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2512 | Քիմիական արտադրության տեխնոլոգիա | Լայն պրոֆիլի ապարատավար | 3 | 1 | 1 | 3 |

».

3) որոշման N 2 հավելվածի`

ա. «0200 Հումանիտար մասնագիտություններ և սոցիոլոգիա» բաժինը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| « | 0203 | Իրավապահական գործունեություն | Իրավապահական | - | 2 տարի | 3 տարի | » |

տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| « | 0204 | Ոստիկանական գործ | Ոստիկան-սպա | - | 2 տարի | - | », |

բ. «1700 Տեխնոլոգիական մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ» բաժինը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| « | 1722 | Էլեկտրաֆիկացված և օդաչուաօդանավային համալիրների տեխնիկական շահագործում | Տեխնիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի | » |

տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| « | 1723 | Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում | Էլեկտրատեխնիկ-մեխանիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի | », |

գ. «2200 Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» բաժինը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| « | 2205 | Կիրառական ինֆորմատիկա (ըստ ճյուղերի) | Տեխնիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի | » |

տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| « | 2206 | Մեխատրոնիկա | Տեխնիկ-մեխատրոնիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի | »: |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. մարտի
Երևան